

Ջրաչափական հանգույցների նախագծում



Երկիր. Հայաստանի Հանրապետություն

Պատվիրատու Համաշխարհային Բանկ, Ջրային Տնտեսության Չարգացման և Բարեփոխումների Ծրագրի Իրականացման Գրասենյակ ՊՀ

Ժամկետները. 10 հոկտեմբեր 2002թ. - 31 հունվար 2003թ.

Ծառայության մոտավոր գինը

85 000 ԱՄՆ դոլար

Տեխնիկական առաջադրանք

1. Ջրատարների վրա կազմակերպվող ջրաչափական հանգույցների տեղերի ճշգրտում, հիմնավորում:
2. Ջրաչափական սարքավորումների տիպաչափերի և տեղադրման տեխնոլոգիական լուծումների ընտրության
3. Ջրաչափական հանգույցների ստեղծման աշխատանքային նախագծի մշակում և մրցառքային 5 փաթեթների պատրաստում:



Ծրագրի և կատարված ծառայության համառոտ նկարագիրը

- ✓ Գաշտային այցելությունների ընթացքում Հայաստանի ամբողջ տարածքում ուսումնասիրվել են «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ենթակայության ջրամատակարարման համակարգերը:
- ✓ Ուսումնասիրությունների ընթացքում ճշտվել և հավաքագրվել են տվյալներ գործող ջրամատակարարման համակարգերի տեխնոլոգիական տարրերի (խողովակաշարերի, փականների, ջրաչափական հանգույցների և այլն) տեխնիկական ցուցանիշների վերաբերյալ:
- ✓ Ուսումնասիրությունների արդյունքում հստակեցվել են նախագծվող ջրաչափական հանգույցների տեղադիրքերը, որոշվել են նրանց աշխարհագրական կոորդինատները GPS-12 սարքերի օգնությամբ, կազմվել են տարածքների գեոդեզիական հանույթները:
- ✓ Նախնական նախագիծը Պատվիրատուի հետ քննարկվել և համաձայնեցվել է: Հստակեցվել են նախագծվող 639 ջրաչափական հանգույցների ցուցանիշները, ջրաչափերի տիպերը, նրանց իրականացման տեխնոլոգիական լուծումները, որոնք հիմք են հանդիսացել աշխատանքային նախագծի և մրցառքային փաստաթղթերի մշակման համար:
- ✓ Աշխատանքային նախագծով մշակվել են շինարարական մրցառքային 5 փաթեթներ, որոնցից յուրաքանչյուրը ներառել է տեխնիկական մասնագրերի, բացատրական մասերի, աշխատանքային գծագրական մասերի, աշխատանքային ծավալների և կոնֆիդենցիալ նախահաշիվների գրքեր:
- ✓ Աշխատանքային նախագծի գծագրական մասով մշակվել են տեխնոլոգիական, շինարարական և էլեկտրամատակարարման բաժիններ, տիպարային և տարբերակային նախագծային լուծումներ:
- ✓ Աշխատանքային նախագծի մշակման ընթացքում կիրառվել են AutoCAD գծագրական և ArcView GIS համակարգչային ծրագրերը:



Աշխատանքի նպատակն է.

1. Նպաստել Հանրապետության բնակավայրերի (Երևանից դուրս) ջրամատակարարման մակարդակի բարելավմանը, ղեկավարման ու շահագործման արդյունավետության բարձրացմանը:
2. Ստեղծել «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ենթակայության ջրամատակարարման համակարգերում (աղբյուրներից մինչև բնակավայրեր) մատակարարվող ջրաքանակի հաշվառման համակարգ:

